ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 սեպտեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

124
(2974)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՆԵՐԸ ՓՈՐՁՈՒՄ Է ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

Չլիներ 2018 թվականի իշխանափոխությունը՝ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի կնոջ հայր Զոնիկ Մարգարյանը իր ապրելակերպով թերեւս համալրած կլիներ 450 հազար թոշակառուների շարքերը: Սակայն հեղափոխությունից հետո Մարգարյանը նշանակվեց Կենտրոնի փոխթաղապետ, այնուհետեւ արդարադատության նախարարությունում զբաղեցրեց «տարատեսակ ՊՈԱԿ-ների» տնօրենի պաշտոնը: Ամենահետաքրքիրն այն է, որ ունենալով Երեւանում բնակարան (գուցե բնակարաններ)՝ Զոնիկ Մարգարյանը նաեւ մի բնակարան է փորձում ստանալ պետական ծրագրով՝ բացառիկ պայմաններում շահելով մատչելի ծրագրով նախատեսված անշարժ գույքը:

Եվ ոչինչ, որ ՀՀ-ում կան բազմաթիվ անօթեւաններ, բռնագաղթված արցախցիներ, այլ կարիքավորներ:

ArmLur.am-ը, փաստական տվյալների առկայությամբ, փորձեց Զոնիկ Մարգարյանից ճշտել, թե այդ ինչպես է, առանց վիճակահանության կամ վիճակահանությամբ, փորձում ձեռք բերել բնակարան Գրիբոյեդով փողոցի N 48 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքում:

Մեր մի քանի զանգերը մնացին անպատասխան, սակայն արձանագրենք, որ Ալեն Սիմոնյանի իշխանություն գալուց հետո նրա եւ եղբայրը տան տեր դարձավ, եւ աները:

Նախկիններին «թալանչի» անվանող իշխանությունը, կարծես թե, պոզով-պոչով կոռուպցիայի մեջ է թաթախվում:

Ամեն անգամ հորդառատ անձրեւներից հետո Երեւանը վերածվում է «Հայկական Վենետիկի»: Ամեն ինչ թերեւս իսկապես գեղեցիկ կլիներ, եթե յուրաքանչյուր անձրեւից հետո ողջ Երեւանով խայտառակ իրավիճակ չստեղծվեր: Անձրեւաջրերը հեղեղում են փողոցները, խանութները, տները, իսկ մարդկանց ավտոմեքենաներն անցնում են ջրի տակ: Համապատասխան կառույցներն էլ, մեկը մյուսի վրա մեղքը բարդելով, խուսափում են պատասխանատվությունից: Երբ խնդրի առնչությամբ դիմում ենք քաղաքապետարան՝ հասկանալու, թե ի վերջո ով է պատասխանատու իրավիճակի համար, երբ կվերանա այս խայտառակ դրությունը, ուղղորդում են «Վեոլիա ջուր»՝ պարզաբանելով, որ նրանք են ջրահեռացման գործընթացի պատասխանատուն: Այս խնդիրը, թերեւս, շատ խոր արմատներ ունի: Նախ՝ Երեւանում տասնամյակներով քաղաքաշինական պլանավորում չի իրականացվում, ինչը թույլ կտար խուսափել նման իրավիճակներից, բացի դրանից՝ մայրաքաղաքում ջրատար խողովակներն ու կոյուղատարները եւս խայտառակ վիճակում են. անհիշելի ժամանակներից դրանք չեն թարմացվել, չեն նորոգվել, այդ պատճառով էլ նախատեսված գործառույթները պատշաճ չեն իրացնում: Մայրաքաղաքում հատկապես վերջին տարիներին նորակառույց բազմաթիվ բնակարաններ եւ շինություններ են ավելացել, որոնք նույնպես միացված են այդ անբարեկարգ վիճակում գտնվող ջրատար խողովակներին: Արդարության համար նշենք, որ հորդառատ անձրեւները սպառնալիք են անգամ եւրոպական շատ զարգացած երկրների, խոշոր քաղաքների համար, որտեղ նույնպես անձրեւներից հետո հեղեղ է առաջանում: Մասնավորապես, երկու օր է, ինչ հեղեղված են Լեհաստանի, Ռումինիայի, Հունգարիայի, Սլովակիայի եւ հատկապես Չեխիայի շատ քաղաքներ, գյուղեր:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Երեկ ընդդիմադիր «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդ Բագրատ սրբազանը խորհրդարանում հանդիպեց ԱԺ «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունների հետ: Սրբազանը ՔՊ-ին եւս հենց ԱԺ-ում հանդիպելու «առաջարկ» արեց, սակայն ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանը ՔՊ-ական մի սարկազմիկ պատասխան էր տվել՝ «թող զանգեն, գրանցվեն, եթե խոսելու բան ունեն»: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Բագրատ սրբազանի եւ ընդդիմադիրների հետ հանդիպումը մոտ մեկ ժամ տեւեց. այն «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի աշխատասենյակում էր ընթանում: Մինչ այս շատ անգամներ են Բագրատ սրբազանը եւ խորհրդարանական ընդդիմությունը հանդիպել, սակայն ԱԺ-ում նմանօրինակ հանդիպում առաջին անգամն էր: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հանդիպումը նախաձեռնել էր հենց Բագրատ սրբազանը: Հանդիպման օրակարգում հիմնականում սեպտեմբերի 22-ի հավաքն է եղել, եւ Նիկոլ Փաշինյանին հանրային ճնշմամբ իշխանությունից հեռացնելու հարցը: Բագրատ սրբազանը ներկայացրել է իր տեսլականը, թե ինչ սպասելիքներ ունի այդ հավաքից, ընդդիմադիրներն էլ վերահաստատել են, որ պատրաստ են աջակցելու շարժմանը թե՛ խորհրդարանում, թե՛ փողոցային պայքարում: Բագրատ սրբազանը ներկայացրել է նաեւ այս ընթացքում տարբեր ոլորտների ներկայացուցիչների հետ հանդիպման արդյունքները, մինչ այս արված աշխատանքը, քննարկվել են նաեւ շարժման առաջիկա անելիքները: Բագրատ սրբազանը եւ ընդդիմադիրները վերահաստատել են, որ շարժման եւ պայքարի բանալին հանրության շրջանում լայն կոնսոլիդացիա ապահովելն է:

Ստրժ Սարգսյանի արդարացման գինը դատավոր Վահե Միսակյանի վրա թանկ կնստի: Բանն այն է, որ դատական համակարգում շատ են տարածված խոսակցությունները, որ Միսակյանի լիազորությունները կդադարեցվեն, ու ԲԴԽ-ում էլ ներքին քննարկման ժամանակ կարծիքներ են հնչել, որ նրան պետք է հեռացնեն համակարգից: Ինչպես հայտնի է՝ այս տարվա մեջ երկրորդ անգամ է դատավոր Միսակյանի դեմ կարգապահական վարույթ հարուցվում: Առաջին անգամ այս տարվա ապրիլի 24-ին Բարձրագույն դատական խորհուրդը, քննելով Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդությունը՝ Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Վահե Միսակյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որոշեց բավարարել այն. Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Վահե Միսակյանին հայտարարվեց խիստ նկատողություն: Ըստ դատախազության հաղորդման՝ Վազգեն Մանուկյանի գործով, իբրեւ թե, դատավարական ժամկետների խախտում կար: Դատելով իրավիճակից՝ երկրորդ վարույթը ճակատագրական ավարտ կունենա դատավորի համար:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ ՍՐԲԱԶԱՆԸ ԵՎ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԸ

«Քննարկել ենք ընդհանուր՝ Սրբազան շարժմանը վերաբերող հարցեր, նշել ենք, որ մենք՝ որպես ընդդիմադիր շարժում, մյուս ընդդիմադիրների հետ մեր աջակցությունն ենք հայտնելու. նաեւ անդրադարձել ենք գործիքակազմերին, որոնք վերաբերում են ԱԺ ընդդիմադիր խմբակցության գործողություններին, պայմանավորվել ենք, որ ապագայում եւս մեր աջակցությունը ցուցաբերելու ենք հենց խորհրդարանում»:

Այս մասին լրագրողների հետ ճեպազրույցում ասաց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Մեյրան Օհանյանը:

-Ինչպես գիտեք՝ այս փուլում Սրբազան շարժման վերագնահատումների, վերախմբավորումների եւ նաեւ հաջորդ փուլին անցնելու միջոցառումներ են ընթանում, ու Բագրատ սրբազանը հանդիպումներ է ունենում տարբեր քաղաքական գործիչների, քաղաքական կազմակերպությունների, ուժերի, անհատների հետ: Ինչպես գիտեք՝ հանդիպել է հանրապետության նախագահների հետ, եւ այս շրջանակում հանդիպումը տեղի ունեցավ նաեւ Ազգային ժողովում՝ «Հայաստան» խմբակցության խորհրդակցությունների սենյակում: Մենք քննարկեցինք Սրբազան շարժմանը վերաբերող ընդհանուր հարցեր, նշեցինք, որ մենք՝ որպես ընդդիմադիր շարժում, մյուս ընդդիմադիր ուժերի հետ աջակցել ենք Սրբազան շարժմանը եւ շարունակելու ենք աջակցել: Քննարկվեցին նաեւ գործիքակազմեր, որոնք վերաբերում են Ազգային ժողովի գործունեությանը, Ազգային ժողովի ընդդիմադիր գործողություններին՝ դրանք վերաբերում են եւ անվստահություն հայտնելուն, եւ իշխանափոխությանը եւ մնացած բոլոր հարցերին: Պայմանավորվեցինք, որ ապագայում մենք նույնպես մեր աջակցությունը ցուցաբերելու ենք՝ որպես ընդդիմադիր ուժ: Առաջիկայում, որքան որ ես հասկացա՝ ամսի 22-ին, մարզահամերգային համալիրում մեծ միջոցառում է տեղի ունենալու, այնտեղ մենք եւ մեր մասնակցությամբ եւ աջակցությամբ կլինենք շարժման կողքին:

-Իսկ ի՞նչ սպասումներ կան այդ օրվա հավաքից, քանի որ հիմա իշխանություններն ասում են, որ այլեւս ընդդիմադիր շարժմանը չի հաջողվում մարդաքանակ ապահովել:

-Կարծում եմ, որ այն խորհուրդը, որը սրբազանի գլխավորությամբ ձեւավորված է, օրակարգ կձեւավորի, եւ այն ուղերձները, որոնք անհրաժեշտ են մեր ժողովրդին փոխանցելու, կտեղեկացվեն: Ըստ իս՝ ակնհայտ է, որ շարժման եւ խորհուրդը եւ ղեկավարությունը, նաեւ մեր ժողովուրդը, պետք է իմանան, որ յուրաքանչյուր պայքար պարունակում է համբերատար, նաեւ համառ գործողություններ, եւ այդ պարագայում յուրաքանչյուրն իր դերակատարությունը պետք է ունենա. կարծում եմ՝ պետք չէ նաեւ, որ քայլերը շատ ձգձգվեն, պետք է լինեն հստակ գործողություններ, որոնք պայքարը կհասցնեն նպատակակետին:

-Պարոն Օհանյան, շարժման հենց սկզբից Բագրատ սրբազանի առաջին առաջարկն ընդդիմադիրներին այն է եղել, որ սկսեն անվստահության գործընթաց, դա շարունակո՞ւմ է օրակարգում լինել, թե՞ այլեւս անհնարին եք համարում:

-Օրակարգում բոլոր գործողությունները ամբողջ գործիքակազմով շարունակում են մնալ, բայց նաեւ սրբազանն ինքն է շարժման շրջանակում գիտակցում, որ Ազգային ժողովում ընդդիմադիր խմբակցությունը կարող է գործել՝ շարժման արդյունքից ելնելով: Այսինքն՝ պետք է լինի ժողովրդական լայն համախմբում, եւ լայն համախմբումը կարող է նախապայմաններ ստեղծել այդ գործողություններին գնալու՝ նկատի ունեմ անվստահություն հայտնելը:

-Պարոն Օհանյան, շարժման արդեն երբեմնի ակտիվ մասնակցիներից Սուրեն Պետրոսյանն ասում է՝ քանի խորհրդարանում դուք եք ընդդիմություն՝ նկատի ունենալով «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները, Նիկոլ Փաշինյանը մշտապես լինելու է իշխանության ղեկին: Նշում է, որ ինքը ի սկզբանե Բագրատ սրբազանին ասել է՝ թույլ չտա ընդդիմադիր խմբակցություններին խառնվել պայքարի պրոցեսին:

-Սուրեն Պետրոսյանին ես չեմ ուզում մեկնաբանել, նա ինքն է ցույց տվել, թե որքանով է ընդգրկված շարժման մեջ եւ որքանով են արդյունավետ նրա գործողությունները. ինքը չէ, որ պետք է ասի, թե որ ընդդիմադիր խմբակցությունները լինեն ԱԺ-ում, եւ որքանով ընդգրկված լինեն շարժման մեջ: Այդ շարժման ղեկավարությունը գործում է սրբազանի առաջնորդությամբ, եւ մենք աջակցում ենք՝ որքան մեր հնարավորությունները թույլ են տալիս:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ս. ՍԵԺՈՒՐՆԵՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

Պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Ֆրանսիայի Եվրոպայի եւ արտաքին հարաբերությունների նախարար Ստեֆան Սեժուրնեն այցելել է Մուսա լեռան հերոսամարտի հուշահամալիր:

Այս մասին տեղեկանում ենք Ֆրանսիայի ԱԳ նախարարի X-ի միկրոբլոգում կատարված գրառումից:

«Մուսա լեռան հուշահամալիրում.

1915 թվականի սեպտեմբերին 53 օր հերոսական դիմադրությունից հետո 4092 մուսալեռցի հայեր փրկվեցին ծովակալ Դարտիժի ֆրանսիացի նավաստիների կողմից եւ մազապուրծ եղան ցեղասպանությունից: Մենք հիշում ենք այս հայ եւ ֆրանսիացի հերոսներին», - գրել է Ստեֆան Սեժուրնեն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

Անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է, որ Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (National Democratic Institute - NDI) ծրագրի շրջանակներում երեկ այցելել է Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց: Պատգամավորը նշում է. «Հաճելի զրույց ունեցանք ավագ դպրոցի աշակերտների հետ:

Զրույցն աշակերտներին հնարավորություն ընձեռեց անմիջականորեն լսելու մի շարք կարեւոր հարցեր, մասնավորապես՝

- քաղաքացիական մասնակցության կարեւորությունը
- ժողովրդավարական կառավարման սկզբունքները
- ժողովրդավարության առջեւ ծառացած մարտահրավերները եւ հնարավորությունները
- թե ինչպես երիտասարդները կարող են նպաստել իրենց համայնքների ապագայի ձեւավորմանը:

Ես միշտ խրախուսում եմ աշակերտներինլսելինել տեղեկացված եւ ներգրավված հասարակական գործերին:

Ելույթս ավարտեցի աշակերտների համար խրախուսական ուղերձով, որպեսզի շարունակեն սովորել ժողովրդավարության մասին եւ մտածել, թե ինչպես կարող են նպաստել ժողովրդավարական գործընթացին, ինչպես հիմա, այնպես էլ ապագայում»:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՊԻՏԻ ՑՈՒՅՑ ՏԱ, ՈՐ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ Է ՈՒԶՈՒՄ

Ադրբեջանի պատասխանատվությունն է նախքան COP29-ը ցույց տալ, որ անկեղծորեն ցանկանում է հասնել խաղաղության:

Այս մասին երեկ ասաց Ֆրանսիայի Եվրոպայի եւ արտաքին գործերի նախարար Ստեֆան Սեժուրնեն Երեւանում իր հայ գործընկերոջ հետ համատեղ ասուլիսում:

Հայաստանի եւ Ֆրանսիայի ԱԳ նախարարները հանդիպմանը խոսել են Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունների մասին:

«Ֆրանսիան աջակցում է մի պայմանագրի ստորագրմանը, որը արդար ու կայուն խաղաղություն կհաստատի՝ հարգելով երկու երկրների սուվերենությունը, տարածքային ամբողջականությունը: Սա Ալմաթիում 1991-ին ստորագրված փաստաթղթի ամբողջ իմաստն է: Պրահայում եւս քաղաքական հանրությանն այս նույն գաղափարն է ներկայացվել 2022-ին»,-ասաց Ֆրանսիայի ԱԳ նախարարը՝ կարեւորելով խաղաղության հաստատումը:

Անդրադառնալով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման գործընթացին՝ նա ասաց, որ օգոստոսի 30-ին ձեռք բերված համաձայնությունը ճիշտ ուղղությամբ է գնում: Ֆրանսիան աջակցում է այդ գործընթացին՝ հիմնվելով սուվերենության եւ տարածքային ամբողջականության սկզբունքներին:

«Հարավային Կովկասը պետք է դառնա խաղաղության եւ համագործակցության մի շրջան, որը հնարավորություն կտա զարգացնել առեւտուրը, Հայաստանն էլ կբարգավաճի»,-նշեց Սեժուրնեն:

Նա ընդգծեց՝ Հայաստանը, Ֆրանսիան, միջազգային հանրությունը ցանկանում են խաղաղություն:

«Քանի որ Ադրբեջանը շուտով կհյուրընկալի COP29-ը, նրա պատասխանատվությունն է ցույց տալ, որ անկեղծորեն ցանկանում է հասնել այդ խաղաղությանը նախքան COP29-ը: Կարծում եմ՝ պետք է կարողանալ շատ արագ առաջ գնալ այս թեմայի ուղղությամբ»,-ասաց Սեժուրնեն:

COP29-ը նոյեմբերին կանցկացվի Ադրբեջանում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ

Պաշտոնական այցով Վրաստան մեկնած Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին Թբիլիսիի «Շոթա Ռուսթավելի» միջազգային օդանավակայանում դիմավորել է Վրաստանի Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարար Իրակլի Կարսելաձեն:

Ինչպես տեղեկանում ենք ՀՀ կառավարության տարածած հաղորդագրությունից՝ դիմավորման պաշտոնական արարողությունից հետո տեղի է ունենալու Նիկոլ Փաշինյանի եւ Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի առանձնազրույցը, այնուհետեւ քննարկումները կշարունակվեն ընդլայնված կազմով:

Քննարկումների արդյունքներով Հայաստանի եւ Վրաստանի վարչապետները հանդես կգան հայտարարություններով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Ֆրանսիայի Եվրոպայի եւ արտաքին գործերի նախարար Ստեֆան Սեժուրնեի գլխավորած պատվիրակությանը:

Ինչպես տեղեկանում ենք Հայաստանի վարչապետի աշխատակազմի տարածած հաղորդագրությունից՝ Նիկոլ Փաշինյանը ողջունել է Ստեֆան Սեժուրնեի գլխավորած պատվիրակության այցը Հայաստանի Հանրապետություն եւ կարեւորել Ֆրանսիայի հետ հարաբերությունների հետագա զարգացումը, այդ թվում՝ անվտանգության ու տնտեսության ոլորտներում:

«Մեր ռազմավարությունը հետեւյալն է՝ մենք ուզում ենք ամրապնդել եւ ուժեղացնել մեր ինքնիշխանությունը, անկախությունը, մեր պետականությունը, եւ այս ճանապարհին, իհարկե, Ֆրանսիայի աջակցությունը մենք շատ բարձր ենք գնահատում»,- ասել է Նիկոլ Փաշինյանը: Վարչապետն ընդգծել է նաեւ ԵՄ-ի հետ Հայաստանի հարաբերությունների զարգացման գործում աջակցություն ցուցաբերելու Ֆրանսիայի պատրաստակամությունը:

Ստեֆան Սեժուրնեն շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար եւ նույնպես շեշտել Հայաստան-Ֆրանսիա համագործակցության հետեւողական զարգացման կարեւորությունն անվտանգության ու տնտեսության բնագավառներում:

«Ֆրանսիան Հայաստանի կողքին է եւ շարունակելու է իր աջակցությունը հայ ժողովրդին, մենք նաեւ բոլոր ջանքերը գործադրել ենք, որպեսզի ամրապնդվեն հարաբերությունները մեր երկու ժողովուրդների միջեւ»,- նշել է Ֆրանսիայի Եվրոպայի եւ արտաքին գործերի նախարարը:

Զրուցակիցները քննարկել են Հայաստան-Ֆրանսիա հարաբերությունների օրակարգային տարբեր հարցեր: Մտքեր են փոխանակվել Հայաստան-Եվրամիության փոխգործակցության շուրջ: Կողմերը կարեւորել են վիզաների ազատականացման շուրջ երկխոսության մեկնարկը, ինչպես նաեւ Եվրոպական խաղաղության հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետությանն աջակցելու որոշման ընդունումը:

Անդրադարձ է կատարվել նաեւ Հայաստան-Ադրբեջան խաղաղության պայմանագրի շուրջ քննարկումներին, ինչպես նաեւ տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2024թ. հունվար-հուլիս ամիսների կտրվածքով ամփոփվել են հիմնական ժողովրդագրական ցուցանիշները:

ArmLur.am-ը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ 2024 թվականի հունվար-հուլիս ամիսներին կենսունակության գործակիցը՝ ծնվածների եւ մահացածների հարաբերակցությունը, կազմել է 122.9% նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում արձանագրված 141.2%-ի համեմատ:

2024 թվականի հունվար-հուլիս ամիսներին ՀՀ-ում ծնվել է 18 632 մարդ, իսկ նախորդ տարում՝ 2023 թվականին, ՀՀ-ում ծնվել է 20 157 մարդ: Այսինքն, նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ այս տարում ծնելիության մակարդակը մոտ 2000-ով պակասել է:

2024-ին մեռելածինների թիվը եղել է 266-ը, իսկ նախորդ տարի՝ 244:

Այս տարի մահացածների թիվը 15 166 է, իսկ նախորդ տարի եղել է 14 273. ստացվում է այնպես, որ գրեթե 1000-ով այս տարի ավելացել են մահվան դեպքերը: 0-1 տարեկանների մահվան դեպքերն այս տարի եղել են 118-ը, իսկ նախորդ տարի՝ 138-ը: 0-4 տարեկանների մահվան դեպքերը այս թվականին եղել են 144-ը նախորդ տարվա 164-ի փոխարեն:

Բնական հավելաճի թիվն այս տարի 3 466 է, ինչը ավելի քիչ է նախորդ տարվա համեմատ: Նախորդ տարի բնական հավելաճի թիվը եղել է 5 884:

Այս տարի ամուսնությունների ընդհանուր թիվը կազմել է 8 974, ինչը զգալիորեն ավելի քիչ է, քան եղել է անցած տարի. նախորդ տարում ամուսնությունների ընդհանուր թիվը եղել է 9 156: Առավել հետաքրքրական են ամուսնալուծությունների ցուցանիշները, որոնք այս տարի կազմում են 2 626, ինչը 36-ով շատ է անցյալ տարվա ցուցանիշից: 2023 թվականին ամուսնալուծությունների ցուցանիշը եղել է 2 590:



ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները, հունվար-հուլիս
(Աղբյուրը՝ Քաղաքացիական կացության ակտերի ռեգիստր)

	Բացարձակ թվաքանակ, մարդ/դեպք			2024թ. բացարձակ ցուցանիշի փոփոխությունը, %		1 000 բնակչի հաշվով, պրոմիլ		
	2022թ.	2023թ.✧	2024թ.•	2022թ. նկատմամբ	2023թ. նկատմամբ	2022թ.✧	2023թ.✧	2024թ.•
Ծնվածներ	19 492	20 157	18 632	95.6	92.4	11.4	11.8	10.6
Մեռելածիններ	249	244	266	106.8	109.0	12.6 [1]	12.6 [1]	12.0 [1]
Մահացածներ	16 435	14 273	15 166	92.3	106.3	9.6	8.4	8.6
Բնական հավելաճ	3 057	5 884	3 466	113.4	58.9	1.8	3.4	2.0
Ամուսնություն	9 306	9 156	8 974	96.4	98.0	5.5	5.4	5.1
Ամուսնալուծություն	2 577	2 590	2 626	101.9	101.4	1.5	1.5	1.5
0-1 տարեկան մահեր	136	138	118	86.8	85.5	7.0 [2]	6.8 [2]	6.3 [2]
0-4 տարեկան մահեր	156	164	144	92.3	87.8	8.0 [2]	8.1 [2]	7.7 [2]

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՉԵՌՔ Է ԲԵՐՈՒՄ ՆՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանն անհանգստացած է Ադրբեջանի կողմից տարբեր երկրներից մեծ ծավալի սպառազինության ձեռքբերմամբ: Խորհրդարանական ճեպազրույցի ժամանակ այս մասին ասաց Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը՝ պատասխանելով լրագրողի հարցին, թե արդյոք Ադրբեջանի կողմից էսկալացիայի վտանգ կա:

«Իհարկե, մենք էլ ենք անհանգստացած այն մեծ ծավալի սպառազինության ձեռքբերմամբ, որն Ադրբեջանն իրականացնում է: Ընդ որում՝ տարբեր երկրներից: Եթե ժամանակին Հայաստանի նախկին իշխանություններն անհանգստացած լինեին, 44-օրյա պատերազմի ընթացքում մեր պահեստները կլինեին լիքը, մեր զորակոչային ռեսուրսը կլիներ ավելի պատրաստված, խնդիրներին դիմակայելուն բավականին պատրաստված կլինեինք եւ ոչ թե կկանգնեինք «բանկաբութուլկա»-ի հետեւում: Ես դա միշտ ասում եմ: Հնարավոր է այն զինվորականներից շատերը, որոնք նաեւ 90-ականներին ձեւավորել են հայոց բանակը՝ մեզ հետ, նեղանան»,- ասաց Քոչարյանը:

Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն ընդգծեց՝ Հայաստանն իրականացնում է այնպիսի ծրագրեր, որ կանխի Ադրբեջանի ցանկությունները:

«Բայց անհանգստության մասին պետք չէ շատ խոսել, պետք է գործել եւ աշխատել: Դա այն է, ինչ արվում է հենց հիմա»,- եզրափակեց Քոչարյանը:

Անդրանիկ Քոչարյանը երեւի մոռացել է, որ նա ԱԺ այն պատգամավորն ու ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի այն նախագահն է, որը տապալել է 44-օրյա պատերազմի քննիչ հանձնաժողովի աշխատանքները, եւ գրեթե կես տարի է՝ չի կարողանում հրապարակել հանձնաժողովի զեկույցը:

ՀԵՂԵՂԱՑԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՄԱՇՎԱԾ Է

Սեպտեմբերի 13-ի հորդառատ անձրեւների հետեւանքով մայրաքաղաքի բազմաթիվ հասցեներում ջրի կուտակման դեպքերը եւս մեկ անգամ վկայեցին, որ Երեւանն ունի թերի կառուցված հեղեղատարների համակարգ, լուրջ վերակառուցման անհրաժեշտություն է զգացվում:

Այս մասին Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական նիստի ժամանակ հայտնեց քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

«Մենք գույքագրել ենք ամբողջ քաղաքը, բոլոր այն թաղամասերը, որտեղ չկան հեղեղատարներ, կամ եղածը ենթակա է վերակառուցման: Գույքագրման ընթացքում եւս ակնհայտ էր, որ շատ հատվածներում այլեւս չի բավարարում թողունակությունը: Բոլոր հետեւանքներն այս պահին վերացված են, բոլոր ստորգետնյա անցումները մաքրված են»,-ասաց Արեյանը:

Քաղաքապետ Տիգրան Ավինյանը, անդրադառնալով խնդրին, ընդգծեց՝ համաձայն է, որ հեղեղատար համակարգը բավականին հին եւ մաշված է:

«Այդտեղ էական ներդրումների կարիք կա: Այդ ներդրումները կարվեն, հենց այս շաբաթ կառավարությունում այդ թեմայով քննարկում ունենք: Հիշեցնեմ, որ փաստացի 2 տարի է՝ Երեւան քաղաքը կոյուղի է կառուցում: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնենք, որ սրանք ոչ սովորական հեղեղումներ են, եւ ամբողջ աշխարհում տարբեր քաղաքներում այս նույն խնդիրները առաջանում են: Այս պարագայում շատ կարեւոր է, որ մենք այս ինֆորմացիան նաեւ գրագետ ձեւով մատուցենք, որովհետեւ կարեւոր է հասկանալ, թե ինչպես պետք է մարդիկ գործեն նմանատիպ ֆորսմաժորների դեպքում, իրազեկման տեսանկյունից անելիք ունենք »,- ասաց Տիգրան Ավինյանը:

ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ՊԱՐՔՎՈՒՄ ԵՆ

ԱՆԶԳՈՒՅՇ ԿՐԱԿՈՑԻՑ ՔԻՆԾԱՌԱՅՈՂ Է ՎԻՐԱՎՈՐՎԵԼ

2024թ. սեպտեմբերի 15–ին ՀՀ ֆինչական կոմիտեի զինվորական ֆինչական գլխավոր վարչության 3-րդ կայազորային ֆինչական բաժին ՀՀ ՊՆ ՌՈ Սիսիանի բաժնից ստացվել է հաղորդում ՀՀ ՊՆ N զորամասում ժամկետային զինծառայողի կողմից հրազենային վնասվածք ստանալու վերաբերյալ: Այս մասին հայտնում են ՀՀ ֆինչական կոմիտեից:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 3-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդված 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննության կատարումը հանձնարարվել է քննչական խմբին, որի կողմից կատարվել են անհետաձգելի քննչական եւ վարութային բազմաթիվ գործողություններ: Մասնավորապես, զննվել է դեպքի վայրը, առգրավվել անհարժեշտ հետքեր ու առարկաներ, նշանակել փորձաքննություններ եւ հարցաքննվել են մի շարք անձինք:

Վարույթի շրջանակներում տվյալներ են ստացվել այն մասին, որ սեպտեմբերի 15-ին՝ ժամը 18:45-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայողներից մեկը զենքի լիցքավորման ժամանակ անզգուշաբար ինքնաձիգից արձակել է մեկ կրակոց, ինչի հետեւանքով մեկ այլ պարտադիր ժամկետային զինծառայող գլխի հետնամասի շրջանում ստացել է հրազենային վիրավորում եւ տեղափոխվել հոսպիտալ: Բուժհաստատությունից ստացված տեղեկատվությամբ՝ զինծառայողը վիրահատվել է, ներկա պահին (խմբ.) նրա կյանքին վտանգ չի սպառնում:

Նախաքննությունը շարունակվում է, միջոցներ են ձեռնարկվում հանգամանքները լիարժեքորեն պարզելու ուղղությամբ: Զանգվածային լրատվության առանձին միջոցներում հրապարակված տեղեկատվությունն առ այն, որ մարտական դիրքում ժամկետային երկու զինծառայող կրակել են միմյանց վրա, իրականությանը չի համապատասխանում:

Ք. Մ.

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՈՏ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՎԵՃԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ArmLur-ի ձեռքում է հայտնվել բացառիկ տեսանյութ, որտեղ երեւում է, թե ինչպես են Գրիգոր Լուսավորիչ-Բեյրութ փողոցների խաչմերուկում մեքենաների վարորդները վիճաբանում, ծեծում միմյանց, որից հետո հնչում է կրակոց:

Կիրակի օրը Shamshyan.com-ը հրապարակել էր, որ ժամը 00:05-ի սահմաններում Գրիգոր Լուսավորիչ եւ Բեյրութ փողոցների խաչմերուկում Toyota Camry-ի եւ Mercedes G 55-ի վարորդների միջեւ, միմյանց չզիջելու պատճառով, առաջացել է վիճաբանություն, որի ընթացքում Toyota Camry-ի վարորդ, Երեւանի բնակիչ 21-ամյա Դավիթ Մադաթյանը դուրս է եկել ավտոմեքենայից եւ շարունակել վիճաբանել Mercedes G 55-ի վարորդ, Երեւանի բնակիչ 28-ամյա Հովհաննես Ասատրյանի եւ վերջինիս ուղեւոր, «Էրեբունի» հիվանդանոց տեղափոխված Տ. Ասրյանի հետ: Վերջիններս միմյանց հասցրել են հարվածներ, որի ժամանակ էլ գազային ատրճանակից կրակոցներ են հնչել:

Կարճ ժամանակ անց Արշակունյաց 16 հասցեի մոտից, խուլիգանություն կատարելու հիմնավոր կասկածով, Երեւանի գնդի պարեկները ձերբակալել եւ ոստիկանության կենտրոնական բաժին են տեղափոխել Երեւանի բնակիչ 30-ամյա Ավետիք Հակոբյանին, իսկ մեկ անձ՝վիրավոր, տեղափոխվել է հիվանդանոց եւ գտնվում է ոստիկանների հսկողության տակ:

Մանրամասները՝ ArmLur.am-ի տեսանյութում:

ԳԱՐԳԱՌ ԳՅՈՒՂՈՒՄ ԿՐԱԿՈՑ Է ՀՆՉԵԼ

Ըստ ArmLur.am-ին հասած լուրերի՝ սեպտեմբերի 15-ի գիշերը Լոռու Պարեկային ծառայողները նկատել են, որ Գարգառ գյուղի սկզբնամասում գտնվող գազալցակայանի մոտ «Մերսեդես» մեքենան վարող վարորդը ընթացքի ժամանակ մեքենայից կրակել է: Արդյունքում պարեկային ծառայողները անմիջապես կանգնեցրել են «Մերսեդես» մեքենան, որի սրահի առջեւի մասում նկատել են մեկ պարկուճ, իսկ նստատեղի տակ՝ ատրճանակին նմանվող առարկա եւ մեկ պահեստատուփ:

ArmLur.am-ին հասած տեղեկություններ համաձայն՝խուլիգանություն կատարելու կասկածանքով նշված մեքենայի վարորդ Ն. Խ.-ին, ուղեւորներ՝ Խ. Դ.-ին եւ Գ. Շ.-ին տեղափոխել են բաժին, որտեղ մեքենայի սրահից հայտնաբերվել է մեկ պարկուճ, ատրճանակին նմանվող առարկա եւ փամփշտատուփ: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Խ. Դ.-ն հայտնել է, որ օդաճնշիչ ատրճանակը պատկանում է իրեն, այն ձեռք է բերել 2023թ. Վանաձոր քաղաքի զենքի խանութից եւ սեպտեմբերի 15-ին՝ժամը 22:40-ի սահմաններում, նշված ատրճանակից Գարգառ գյուղի սկզբնամասում ինքն է կրակել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵԼ Է Ա. ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀԱՅՑԱԳԻՄՈՒՄԸ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հայցադիմում էր ներկայացրել ընդդեմ «Մեդիահաբ» լրատվականի՝պահանջելով հերքել զրպարտություն համարվող տվյալները եւ վճարել իրեն որպես փոխհատուցում 1.000.000 ՀՀ դրամ գումար:

«Մեդիահաբ» լրատվականի շահերը այս գործով դատարանում ներկայացրել է փաստաբան Սոս Հակոբյանը:

Նա հայտնել է, որ ՀՀ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը մերժել է Ալեն Սիմոնյանի հայցադիմումը՝ մանրամասն վերլուծելով դրա անհիմն լինելը:

Նշենք, որ հայցադիմումի հիմք է հանդիսացել կայքի՝ 2023 թվականի ապրիլի 13-ին հրապարակած «Կառավարությունն առանց մրցույթի շուրջ 79 մլն դրամի համաձայնագիր է կնքել Ալեն Սիմոնյանի եղբոր ընկերության հետ» վերտառությամբ հոդվածը:

ՏՎՅԱԼՆԵՐ

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ սեպտեմբերի 13-ից 16-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 194 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:

Մասնավորապես՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու 28, մարմնական վնասվածք պատճառելու 24, ֆիզիկական ներգործության եւ թմրանյութի հայտնաբերման 19-ական, հոգեկան ներգործության 14, անձնական ունեցվածքի գողության ու խարդախության 9-ական, սառը զենքի հայտաբերման 8, խուլիգանության 7, գույքի ոչնչացման կամ վնասման 6, փաստաթղթեր կեղծելու 4, թմրանյութի իրացման 5, սեքսուալ բնույթի բռնի գործողության եւ զենք-զինամթերքի առգրավման 3-ական, մարդու առեւանգման, բնակարանային գողության, շորթման, վստահված գույքի հափշտակման, աշխատանքի կանոնները խախտելու, ապօրինի կերպով քաղաքացիական ողորկափող հրազեն, գազային, օդաճնշիչ, սառը կամ նետողական զենք կրելու եւ շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ, խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելու կամ աճեցնելու 2-ական դեպք, ավազակության, համակարգչային հափշտակության, պետական ունեցվածքի գողության, պաշտոնատար անձի ծառայողական գործունեությանը միջամտելու, կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի, կաշառակերության, բուժաշխատողների կողմից մասնագիտական պարտակությունները չկատարելու, ինքնավնասման, անվտանգության պահանջներին չհամապատասխանող հումքերի կամ ապրանքների շրջանառության, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման, հողը փչացնելու, ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու, ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում կյանքին կամ առողջությանը վտագ ներկայացնող առարկաներ պատրաստելու, կողոպուտի, դրամանենգության, պաշտոնեական լիազորությունների չարաշահման, դատական ակտը չկատարելու, անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալու, աշխատանքային անվտանգության կանոնների խախտելու, երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականության ոչ պատշաճ կատարման՝ 1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցագործության դեպքերից բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության 1 դեպք:

Հայտնաբերվել է 12 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 3-ը:

Հայտնաբերվել է 2 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 2 դեպք:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝սեպտեմբերի 13-ից 16-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 194 դեպք, որից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՏԲՃԱՆԱԿՈՎ ԿՐԱԿԵ՞Լ ԵՆ ՕԳՆԱԿԱՆԻ ՎՐԱ

«Դիլիջան» ազգային պարկից հայտնեցին, որ տեւական ժամանակ լարված են ազգային պարկի տնօրեն, Դիլիջանի քաղաքապետի տեղակալ Արման Բազինյանի ընկեր, դասընկեր Ռոբերտ Ալիխանյանի եւ ազգային պարկի տնօրենի օգնական, Նիկոլ Փաշինյանի քեռու տղա Մամիկոն Հովհաննիսյանի հարաբերությունները: Վերջինս ժամանակին Նիկոլ Փաշինյանին բարեխոսել է, որպեսզի Ռոբերտ Ալիխանյանին նշանակեն ազգային պարկի տնօրեն, ու հիմա նրան ասում է՝ «ես եմ քեզ պաշտոնի նշանակել, ես էլ քեզ կհանեմ»: Ազգային պարկից աղբյուրը, որը չցանկացավ, որ իր անունը հրապարակվի, հայտնեց, որ սեպտեմբերի 10-ին ազգային պարկի տարածքում վիճաբանություն է եղել, Ռոբերտ Ալիխանյանի հարազատը, ով ազգային պարկի աշխատող է, վիճաբանել է Մ. Հովհաննիսյանի հետ, որի ընթացքում գործի է դրել ինքնաշեն ատրճանակ, մի անգամ կրակել է Մամիկոնի ոտքերի տակ, մի քանի անգամ՝ այլ ուղղությամբ ու դրանից հետո սպառնացել Մամիկոնին, որ նա ոստիկաններին չհայտնի՝ ասելով, թե ով ասի՝ անբարոյական է, իր տղաները՝ անբարոյականի տղաներ: Ոստիկանությունում քրեական գործ չի հարուցվել: Նույն աղբյուրը հայտնեց , որ Մ. Հովհաննիսյանի վրա կրակածը սեպտեմբերի 11-ին ազգային պարկ աշխատանքի է ներկայացել, իսկ Մ. Հովհաննիսյանը, գտնվելով խիստ շփոթված, վախեցած վիճակում, այդ օրը արձակուրդ է վերցրել: Զանգահարեցինք Դիլիջանի ազգային պարկի տնօրեն Ռոբերտ Ալիխանյանին: Նա ժխտեց, որ կրակել են Մ. Հովհաննիսյանի վրա, ասաց, որ նման դեպք չի եղել, հայտնեց, որ իր եւ Մամիկոնի հարաբերությունները նորմալ, աշխատանքային հարաբերություններ են, Մամիկոնն էլ վերցրել է իր հերթական արձակուրդը: Նիկոլ Փաշինյանի քեռու տղան՝ Տավուշի մարզի Հաղարծին գյուղի բնակիչ Մամիկոն Հովհաննիսյանը, աշխատելով որպես ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ «ՊՈԱԿ-ի ինժեներ, 2019 թ. փետրվար ամսին կադրերի բաժին ներկայացնելով Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի՝ 1993 թ. «գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտությամբ ավարտելու եւ ինժեներ-մեխանիկի որակավորում ստանալու մասին կեղծ դիպլոմի պատճեն, նշանակվել է հիշյալ կազմակերպությունում բաժնի պետ-տնօրենի տեղակալի պաշտոնում: 2019 թ. հունիսի 6-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը վճռել է Մամիկոն Հովհաննիսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 1-ին մասով եւ նրան դատապարտել 200 հազար դրամի չափով տուգանքի: Սակայն Մ. Հովհաննիսյանը 2022 թ. հունիսի 8-ից Դիլիջանի ազգային պարկում զբաղեցնում է տնօրենի օգնականի պաշտոնը: Նա ունի միջնակարգ կրթություն, աշխատանքի ընդունվելիս ներկայացրել է տեղեկանք այն մասին, որ սովորում է եվրոպական համալսարանի Իջեւանի մասնաճյուղում, «կառավարում» մասնագիտությամբ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԻՆՉՈՒ Է ՔԱՂԱՔԸ ՋՐՀԵՂԵՂԻ ՄԵՋ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐԸ» ԿՐԿԻՆ ԻՐ ՏԵՂՈՒՄ ՉԷ

Սեպտեմբերի 13-ին՝ երեկոյան ժամի, քաղաքը կրկին դարձել էր անանցանելի: Ամեն անգամ հորդառատ անձրեւից հետո Երեւանը դառնում է մի մեծ լիճ, որտեղ անհնար է անգամ երթեւեկություն իրականացնել, ինչն անհարմարություն է պատճառում քաղաքացիներին:

Ամեն անգամ անձրեւից հետո անանցանելի են դառնում գետնանցումները, վնասվում են մի շարք խանութներ, այգիներ, շենքեր, որից հետո վերականգնումը բարդ է տրվում:

Մեկ այլ խնդիր է, որ հորդառատ անձրեւներից հետո Երեւանի քաղաքապետարանը չի ապահովում մաքուր մայթերն անձրեւից հետո հողի կուտակումներից:

ArmLur.am-ը դեռ նախորդ անգամ նման իրավիճակի ժամանակ Երեւանի քաղաքապետարանի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանից հետաքրքրվել էր, թե ով է ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի պատասխանատուն եւ ի՞նչն է նման իրավիճակի պատճառը, վերջինս ասել էր՝ դա սպասարկվում է «Վեոլիա ջրի» կողմից:

ArmLur.am-ը կապ հաստատեց «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի հանրային կապերի մասնագետ Կարինե Կարապետյանի հետ՝ հասկանալու, թե ինչու է ամեն անգամ նման իրավիճակ ստեղծվում անձրեւներից հետո: Վերջինս ասաց, որ երեկ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը գործակարգավորման նիստում ասել է, որ հեղեղատար համակարգը հին ու անմխիթար վիճակում է:

«Ինչը հանձնված է «Վեոլիային»՝ մենք ամեն ինչ սպասարկում, շահագործում ենք այնքան, որքան պահանջվում է մեզնից: Մենք տարին երկու անգամ մաքրման, շահագործման բոլոր աշխատանքները կատարում ենք լիարժեք կերպով, բայց քաղաքի մեծ մասը չունի հեղեղատար համակարգ, որը մեր իրավասության ներքո չէ: Այն, ինչ մեզ հանձնված է, մենք կատարում ենք», - ասաց Կարինե Կարապետյանը:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԻՐԱՎԱՐՁԱՅԻՆ

ԿԱՐՄՐՈՒԿԻ ՎԱՐԱԿՄԱՆ 550 ԴԵՊՔ

Անցած շաբաթվա ընթացքում Հայաստանում կարմրուկի ոչ մի դեպք չի արձանագրվել: Այս մասին հայտնում է ԱՆ հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնը

Ընդհանուր առմամբ, 2023 թվականի մարտից ի վեր հայտնաբերվել է վարակման 550 դեպք: Կարմրուկի բռնկումը հանրապետությունում տեղի է ունեցել անցյալ տարվա մարտին:

ՀԱՄԱՏԵՂ ԱՍՈՒԼԻՍ

Հայաստանը պատրաստ է որքան հնարավոր է շուտ խաղաղության պայմանագիր կնքել Ադրբեջանի հետ: Այս մասին, երեկ՝ սեպտեմբերի 16-ի Երեւանում, առավոտյան Ֆրանսիայի Եվրոպայի եւ արտաքին գործերի նախարար Ստեֆան Սեժուրնեի հետ համատեղ ասուլիսում ասաց ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը:

Նախարարն ասաց, որ ֆրանսիացի գործընկերոջ հետ քննարկել է տարածաշրջանային կայունության հարցեր եւ հաստատել Հայաստանի հավատարմությունը խաղաղության օրակարգին: «Ինչպես գիտեք, մենք փոխանցել ենք վերջին խմբագրական առաջարկները, որոնցում տեքստը լիովին համաձայնեցված է»,- նշեց Միրզոյանը՝ շնորհակալություն հայտնելով պաշտոնական Փարիզին՝ տարածաշրջանում խաղաղության հաստատմանն աջակցելու համար:

«Մենք պատրաստ ենք արագ ստորագրել այն տեքստը, որը համաձայնեցված է: Համաձայնագիր, որով երկրները փոխադարձաբար ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը, Ալմաթիի հռչակագիրը, այն սահմանները, որոնք կային ԽՍՀՄ փլուզման ժամանակ»,- նշել է Միրզոյանը:

ՔՅՈԼՆԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՊԱՅԹՅՈՒՆ Է ՈՐՈՏԱՑԵԼ

Գերմանիայի ոստիկանությունը հետաքննում է Քյոլնի կենտրոնում վաղ առավոտյան տեղի ունեցած պայթյունը: Ըստ ոստիկանության՝ ոչինչ չի վկայում այն մասին, որ միջադեպը կապված է ահաբեկչության հետ: Այս մասին հաղորդում է Reuters գործակալությունը:

Պայթյունից վնասվել է Vanity գիշերային ակումբը: Պայթյունի վայրին մոտ գտնվող անցորդներից մեկը թեթեւ վնասվածք է ստացել եւ տեղափոխվել հիվանդանոց:

Իր հերթին Deutsche Welle-ն հաղորդում է, որ ըստ Քյոլնի ոստիկանության ներկայացուցչի՝ պայթյունը տեղի է ունեցել չարագործների կանխամտածված գործողությունների պատճառով:

ԱՆՑԱԿԵՏԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՉԵՆ ԱՇԽԱՏԻ

Վերին Լարսի անցակետի չեզոք գոտում գտնվող թունելում սեպտեմբերի 18-ից հոկտեմբերի 2-ը ներառյալ նախատեսվում է իրականացնել վերանորոգման աշխատանքներ: Այս մասին հաղորդում է ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից մաքսային կցորդը:

Այդ պատճառով նշված ժամանակահատվածում Երեւանի ժամանակով առավոտյան 05:00-09:00 անցակետերը չեն աշխատի:

ԻՆՔՆԱԹԻՌԸ ԱՐՏԱԿԱՐԳ ՎԱՅՐԷՋՔ Է ԿԱՏԱՐԵԼ

Երեւան-Մոսկվա չվերթի ինքնաթիռն արտակարգ վայրէջք է կատարել Աստրախանում:

Ինչպես հայտնում է Ինտերֆաքսը, պատճառը ուղեւորներից մեկի վատ ինքնազգացողությունն է եղել:

Նրան տեղափոխել են քաղաքային բժշկական կենտրոն:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 45 պատահար, 5 մարդ զոհվել է, 61-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԳՈՎԱԶԴ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Ես Մխիթար Համլետի Մանգասարյանս, Արցախից տեղահանման ճանապարհին կորցրել եմ Беларусь 1221.2 անիվավոր տրակտորի տեխնիկական անձնագիրը: Մեքենայի համարանիշներն են՝ 0657UP: Գտնելու դեպքում խնդրում եմ զանգահարել 098 201 285 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Ես՝ Վարդգես Կառլենի Հարությունյանս, սեպտեմբերին Երեւան քաղաքում հայտնաբերել եմ, որ կորցրել եմ ինձ պատկանող՝ ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայության 0151 վկայականը:

Գտնողին խնդրում եմ զանգահարել 091-42-06-69 հեռախոսահամարով:

ԵԱՏՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ Է». ՕՎԵՐՉՈՒԿ

ԵԱՏՄ-ում Հայաստանը շատ ակտիվ, դրական դեր ունի: Երեկ Ախթալայում լրագրողների հետ զրույցում այս մասին ասաց ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը՝ նշելով, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ սեպտեմբերի 13-ին կայացած հանդիպման ընթացքում քննարկել են եւ՛ այդ հարցը, եւ՛ ապագային վերաբերող ծրագրեր:

«Լավ, հանգամանալից զրույց է կայացել»,- նշեց ՌԴ փոխվարչապետը՝ նշելով, որ Փաշինյանի հետ մանրամասն քննարկվել են երկկողմ օրակարգին վերաբերող հարցեր, անդրադարձ է արվել տնտեսական համագործակցության արդյունքներին, աճող ապրանքաշրջանառությունը:

Օվերչուկը շեշտեց՝ եթե 2023թ. երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառությունը 7,3 միլիարդ դոլար էր, ապա այս տարվա առաջին կիսամյակի տվյալներով այդ ցուցանիշն արդեն գերազանցել է 8,4 միլիարդ դոլարը:

«Մենք տեսնում ենք, թե ինչպես է աճում եւ զարգանում Հայաստանի տնտեսությունը՝ ցույց տալով ԵԱՏՄ-ում ՀՆԱ-ի աճի ամենալավ տեմպերը: Մենք բոլորս հասկանում ենք, որ տնտեսական նման հաջողություններն առաջնահերթ ԵԱՏՄ-ի հետ ինտեգրացիոն կապերի շնորհիվ են», - նշեց Օվերչուկը:

Նրա խոսքով՝ սա հնարավոր է դարձել մի քանի պատճառներով. հասանելիություն դեպի 190-միլիոնանոց շուկա, անմաքս առեւտուր, ապրանքների, ծառայությունների, աշխատանքային ռեսուրսների տեղաշարժի ազատություն եւ այլն:

ՌԴ փոխվարչապետը շեշտեց, որ սա ԵԱՏՄ-ի անդամ 5 երկրների մշտական աշխատանքի արդյունքն է:

Տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հաջորդ նիստը կանցկացվի ՌԴ-ում

Եվրասիական տնտեսական միությունը միջազգային ինտեգրացիոն տնտեսական միավորում է, որը գործում է 2015 թվականի հունվարի 1-ից: Միության անդամներն են Ռուսաստանը, Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը եւ Ղրղզստանը:

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Team-Ը՝ WCIT2024/DigiTec-Ի ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ

Հոկտեմբերի 4-ից 7-ը Երեւանը դառնալու է տեխնոլոգիական առաջատար ընկերությունների ու մասնագետների հիմնական հավաքատեղին. Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի կունենա WCIT2024-ը, իսկ «Մերիդիան էքսպո կենտրոն»-ում DigiTec ցուցահանդեսը՝ «ՄՏՔԻ ՈՒԺԸ. Արհեստական բանականություն՝ սահմաններից այն կողմ՝ էթիկայի շրջանակներում» խորագրով: Team Telecom Armenia-ն ստանձնել է այս երկու նշանակալի միջոցառումների գլխավոր տեխնոլոգիական գործընկերոջ դերը:

Երեկ WCIT2024/DigiTec-ի կազմկոմիտեի գործադիր տնօրեն Հայկ Կարապետյանը, ԱՏՁՄ գործադիր տնօրեն Սարգիս Կարապետյանը եւ Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը կնքեցին համագործակցության հուշագիր՝ եւս մեկ անգամ ընդգծելու բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարական կարեւորությունը: Կոնգրեսի շնորհիվ այդ ուղղությամբ իրականացվելու են համատեղ միջոցառումներ՝ Հայաստանում մրցունակ եւ հարմարավետ բիզնես միջավայր ձեւավորելու նպատակով:

Լինելով տեխնոլոգիական առաջատար ընկերություն, որը մշտապես հետեւում է աշխարհում տեղի ունեցող թվային փոփոխություններին՝ Team Telecom Armenia-ն խրախուսում է երիտասարդների շրջանում տեխնոլոգիական ոլորտի նկատմամբ հետաքրքրությունը եւ նպատակ ունի նպաստելու հաջորդ սերնդի առաջնորդների ձեւավորմանը:

«Պատահական չէ, որ Team-ը ստեղծելիս մեզ համար առաջնահերթ աջակցության ուղղություններ ենք ընտրել կրթությունը, գիտությունը եւ տեխնոլոգիաները: Ընդամենը մի քանի շաբաթից կմեկնարկեն երկու խոշորամասշտաբ տեխնոլոգիական միջոցառումներ, որոնցից մեկը մեր երկիրն է ներկայացնում տեխնոլոգիական աշխարհի քարտեզում, իսկ մյուսը՝ համաշխարհային փորձն է բերում այստեղ: Ուրախ եմ, որ Team Telecom Armenia-ն եւս մեկ անգամ դարձավ այս տեխնոլոգիական տոնի կարեւոր մասը»,- մեջբերում է Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

WCIT2024/DigiTec-ի կազմկոմիտեի գործադիր տնօրեն Հայկ Կարապետյանն անդրադառնալով միջոցառման մանրամասներին ու համագործակցությանը՝ նշեց. «WCIT2024/DigiTec-ն այն եզակի միջոցառումներից է, որն իր շուրջն է համախմբում ՏՀՏ եւ բիզնես համայնքն ամբողջ աշխարհից: Արդեն իսկ երկրորդ անգամ Հայաստանը կհյուրընկալի համաշխարհային այս ձեւաչափը՝ WCIT-ն՝ Նորարարությունների եւ տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսը՝ Երեւան հրավիրելով ոլորտի առաջատար դեմքերին: 2024 թվականի թեման է՝ Մտքի ուժը. Արհեստական բանականությունն առանց սահմանների, եւ մենք ամբողջ աշխարհին հնարավորություն ունենք ցույց տալու հայկական մտքի ներուժը: Այս հարցում ուրախ եմ, որ մեր կողքին է գլխավոր գործընկերներից հայկական Team Telecom Armenia-ն, եւ համոզված եմ, որ մենք համատեղ ունենալու ենք հաջողված իրադարձություն»:

ԱՏՁՄ գործադիր տնօրեն Սարգիս Կարապետյանը, կարեւորելով ԱՏՁՄ ռազմավարական անդամ Team Telecom Armenia-ի հետ այս միջոցառումների շրջանակում գործակցությունը, նշեց, որ ընկերությունն առանցքային դեր է ունեցել միության բոլոր հավակնոտ ծրագրերի հաջողության մեջ: Նրա խոսքով՝ WCIT2024-ից ու DigiTec Expo 2024-ից սպասելիքներն այս տարի էլ ավելի մեծ են:

«Այս երկու տեխնոլոգիական միջոցառումները հոկտեմբերին Հայաստան կբերեն հարյուրավոր միջազգային ներդրողների, տեխնոլոգիական ոլորտի առաջատարների եւ հաջողակ ձեռներեցների: Կհյուրընկալենք 15-ից ավելի հեղինակավոր լրատվամիջոցների, ինչպիսիք են «Ֆորբսն» ու «Բենզինգան»: Սա անպայման մեծ ազդեցություն կթողնի հայկական տեխնոլոգիական ոլորտի զարգացման վրա՝ նպաստելով, որ հայկական ընկերությունները ձեռք բերեն միջազգային գործընկերներ, ներգրավեն խոշոր ներդրումներ եւ դուրս գան նոր շուկաներ»:

DigiTec ցուցահանդեսին այս տարի կրկին ներկայանալու է Team ընկերությունների խումբը, որում ներառված ընկերություններին միավորում է նորարար գաղափարներ կյանքի կոչելու ձգտումը, պրոֆեսիոնալիզմը, ինչպես նաեւ երկրի տնտեսության ցուցանիշների աճի վրա ազդելու մեծ ցանկությունը: Տաղավարում ներկայացված կլինեն Team Telecom Armenia, Team Pay, Team Solutions, Team Systems ու buy.am ընկերությունները, ինչպես նաեւ էլեկտրական մեքենաների լիցքավորման Team Energy նախագիծը:

Միջոցառումների օրերին Team Telecom Armenia-ն WCIT-ի ու DigiTec-ի այցելուներին ու մասնակիցներին կապահովի ոչ միայն ինտերնետային, այլ նաեւ տրանսպորտային կապով:

WCIT/DigTec-ի մասին

Նորարարությունների եւ տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսը (WCIT) հեղինակավոր համաշխարհային միջոցառում է, որը կազմակերպվել է SS եւ ծառայությունների համաշխարհային դաշինքի (WITSA) կողմից: WCIT-ը համախմբում է տեխնոլոգիայի առաջնորդներին, ոլորտի մասնագետներին, կառավարության ներկայացուցիչներին ամբողջ աշխարհից՝ ուսումնասիրելու եւ ձեւավորելու տեխնոլոգիայի ապագան եւ դրա ազդեցությունը հասարակության վրա:

ՓՈԹՈՐԻԿ. ԿԱՐՄԻՐ ՄԱԿԱՐԴԱԿ

ՄՈԼԵԳՆՈՒՄ Է 75 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՄԵՆԱՈՒԺԵՂ ԹԱՅՖՈՒՆԸ

«Բեբինկա» թայֆունը, որը սեպտեմբերի 16-ի առավոտյան հասել է Չինաստանի արեւելքում գտնվող Շանհայ, քաղաքում ամենաուժեղն է դարձել 1949 թվականից ի վեր: Այս մասին տեղեկանում ենք «ՌԻԱ Նովոստի» գործակալությունից:

Ըստ Չինաստանի Կենտրոնական օդերեւութաբանական վարչության՝ «Բեբինկա» թայֆունը Շանհայ է հասել սեպտեմբերի 16-ի առավոտյան ժամը 7:30-ին. այդ ժամանակ քամու առավելագույն ուժգնությունը հասել է վայրկյանում 42 մետրի:

Ակնկալվում է, որ «Բեբինկա»-ն կշարունակի շարժվել դեպի արեւմուտք-հյուսիս-արեւմուտք՝ ժամում շուրջ 25 կիլոմետր արագությամբ՝ աստիճանաբար թուլացնելով ինտենսիվությունը:

Ավելի վաղ Չինաստանի կենտրոնական օդերեւութաբանական վարչությունը թայֆունի հետ կապված նախազգուշացման ամենաբարձր՝ կարմիր մակարդակ էր հայտարարել:

Շանհայի «Պուդուն» եւ «Հունցյաո» օդանավակայանները սեպտեմբերի 15-ին ժամը 20:00-ից հետո չեղարկել են բոլոր չվերթերը մինչեւ սեպտեմբերի 16-ի ժամը 14:00-ն: Ժամանակավորապես չվերթները դադարեցրել է նաեւ Նինգբո քաղաքի օդանավակայանը:

Բացի այդ, Յանցզի գետի դելտայի երկաթուղու մի քանի գծերով դադարեցվել է մարդատար գնացքների երթեւեկությունը: Շանհայում արագընթաց ճանապարհները փակ են կամ գտնվում են հսկողության տակ, ճանապարհներին սահմանված է երթեւեկության արագության սահմանափակում՝ ժամում 40 կիլոմետր:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԱՅՐ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ԱՆԱՀԻՏԻՑ ՄԱՐԻԱՄ

ԱՆԱՀԻՏ ԱՍՏՎԱԾՈՒՀՈՒ ԱՐՁԱՆԸ «ՏԱՆՆ» Է

Անահիտ աստվածուհու բրոնզաձույլ գլուխն ու ձեռքը, որոնք պահվում են Բրիտանական թանգարանում, արդեն Հայաստանում են: Դրանք սեպտեմբերի 21-ից կցուցադրվեն Հայաստանի պատմության թանգարանում՝ «Մայր Աստվածություն. Անահիտից մինչեւ Մարիամ» խորագրով ցուցահանդեսի շրջանակում:



«Այսօր մեզ համար շատ խորհրդանշական օր է, որովհետեւ մեր Պատմության թանգարանում հնարավորություն ենք ունենում միջազգային որակի եւ մակարդակի ցուցադրություն բացել, եւ այդ համագործակցությունն իրականացնել աշխարհի ամենահեղինակավոր թանգարաններից մեկի՝ Բրիտանական թանգարանի հետ համագործակցությամբ», - նշել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նա նաեւ տեղեկացրեց, որ ցուցադրության առանցքում Անահիտ աստվածուհու բրոզե արձանն է, բայց ցուցանմուշները մի քանիսն են լինելու:

«Հույս ունեմ, որ սա կլինի մեր մշակութային կյանքի գլխավոր իրադարձություններից մեկը»,- ասաց Ժ. Անդրեասյանը՝ ակնկալելով, որ թանգարանի մոտ հերթեր կլինեն այս կարեւոր ցուցադրությունը տեսնելու համար:

Ք. ա. II-I դդ. թվագրվող Անահիտ աստվածուհու արձանը Հայաստանում կցուցադրվի 6 ամիս:

Ավելի վաղ մանրամասնելով ցուցահանդեսի գաղափարը՝ Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանը նշել էր. «Այս գաղափարն աշխարհի հեղինակավոր թանգարաններից մեկի՝ Բրիտանական թանգարանի հետ համագործակցության արդյունքում է ծնվել: 2023 թվականին Բրիտանական թանգարանում բացվել է «Շքեղություն եւ ուժ. Պարսկաստանից Հունաստան» խորագրով միջազգային ցուցադրությունը, որին մասնակցել է նաեւ Հայաստանի պատմության թանգարանը՝ ներկայացնելով 3 բացառիկ մշակութային արժեքներ՝ Արմավիրից գտնված ոսկյա կրծքազարդը, կավե ցլակերպ ծիսանոթը (Ք.ա. VI-V-րդ դդ.) եւ Արտաշատից գտնված կավե արջակերպ ծիսանոթը (Ք. ա. I դ.): Շատ հետաքրքիր ցուցադրություն էր. պատմական մայրաքաղաք Արտաշատից գտնված արջակերպ պրիտոններից մեկը համադրվեց պատմական Հայաստանից գտնված եւ Բրիտանական թանգարանում պահվող Անահիտ աստվածուհու արձանի բրոնզե դեմքի հետ: Հենց այդ ժամանակ էր, որ կազմակերպիչ-համակարգողների հետ փորձեցինք նաեւ հակառակը կազմակերպել, այսինքն՝ պատմական Հայաստանից գտնված այս արժեքների համատեղ ցուցադրությունը կազմակերպել նաեւ մեր երկրում՝ համադրելով Հայաստանի պատմության թանգարանում պահվող բացառիկ նմուշների հետ»: Դավիթ Պողոսյանի նշմամբ՝ 2024 թվականի սեպտեմբերի 21-ից մինչեւ 2025 թվականի մարտը Հայաստանի պատմության թանգարանը հնարավորություն է ունենալու ցուցադրել եւ պատմականորեն կազմակերպել այս առարկաների հանդիպումը:

Տնօրեն Դավիթ Պողոսյանը նշել էր նաեւ, որ ««Մայր աստվածություն. Անահիտից Մարիամ» խորագրով ցուցահանդեսում Բրիտանական թանգարանից բերվող մասունքները համադրվելու են Պատմության թանգարանի շատ արժեքավոր հավաքածուի հետ՝ սկսած նեոլիթյան ժամանակներից մինչեւ Քրիստոնեություն, մեր օրերը:

«Բոլորը Մարիամ աստվածածին նվիրված ցուցանմուշներ են: Խնդիրը լինելու է այս նմուշների միջոցով պատմել ամենակարեւոր երեւույթներից մեկի՝ մայր աստվածության եւ ընդհանրապես հավերժ թեմայի՝ մոր գաղափարի մասին: Այս առումով Պատմության թանգարանն ունի արժեքավոր, համաշխարհային նշանակության հավաքածու, որը հանդիպելով Բրիտանական թանգարանում պահված մասունքներին, մեր այցելուների համար նորովի կմեկնաբանի այն բովանդակությունը, մեսիջները, որոնք մենք փորձում ենք փոխանցել մեր այցելուներին», - ամփոփել էր Պողոսյանը:

Հիշեցնենք, որ Անահիտի բրոնզաձույլ արձանը երբեք Հայաստանում չի ցուցադրվել: Ըստ Բրիտանական թանգարանի կայքի՝ Անահիտայի պաշտամունքային արձանի՝ Հայաստան բերված գլուխը գտնվել է 1870 ականներին՝ Էրզրումի Սաթալա բնակավայրում: Մի քանի հնավաճառներ այն ձեռքից ձեռք են փոխանցել, ի վերջո, Անահիտի կիսանդրին Բրիտանական թանգարանն է ձեռք բերել:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ԷՄՄԻ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԵՂԵԼ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

«Սյոգուն» պատմական հեռուստասերիալը, որի գործողությունները տեղի են ունենում կայսերական Ճապոնիայում, ճանաչվել է լավագույն դրամա «Էմմի» ամերիկյան հեռուստատեսային մրցանակաբաշխության ժամանակ, իսկ «Հնարքներ» հեռուստասերիալը ճանաչվել է լավագույն կատակերգություն:



Reuters գործակալությունը հաղորդում է, որ «Սյոգուն»-ը հաղթող է ճանաչվել 19 անվանակարգում, ինչը ռեկորդային է դրամայի մեկ սեզոնի համար: «Սյուգուն»-ի հաղթանակների շնորհիվ FX հեռուստաալիքի սեփականատեր Walt Disney ընկերությունն այս տարի շահել է 60 «Էմմի»:

Netflix-ի «Փոքրիկ եղջերու» սերիալը, որը պատմում է հաճախորդի կողմից հետապնդվող բարմենի մասին, ճանաչվել է լավագույն մինի սերիալ:

70-ամյա երգիծաբանի եւ երիտասարդ գրողի մասին պատմող «Հնարքներ» սերիալը ճանաչվել է լավագույն կատակերգություն՝ հիասթափեցնելով նախորդ հաղթող ճանաչված «Արջը» սերիալը ստեղծողներին: Իսկ «Արջը» սերիալը շահել է 11 մրցանակ:

Հաղթողներին ընտրել են Հոլիվուդի հեռուստատեսային ակադեմիայի գրեթե 22 000 անդամներ, այդ թվում՝ ռեժիսորներ, պրոդյուսերներ, դերասաններ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈՍԱՆ՝ ԱՐԱՐԱՏԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Նոա» ֆուտբոլային ակումբը հաղորդագրություն է տարածել ակումբի ֆեյսբուքյան էջում կիրակի օրը կայացած «Արարատի» հետ հանդիպման վերաբերյալ: Հանդիպումն ավարտվել է «Արարատի» հաղթանակով՝ 2-1 հաշվով:

«Անհասկանալի կարմիր քարտ, չեղարկված գոլեր, չնշանակված 11-մետրանոց հարված, դեղին քարտեր:

Սրանք այն հարցեր են, որոնք «Նոա» ֆուտբոլային ակումբը պատրաստվում է բարձրաձայնել Արարատ-Նոա խաղի առնչությամբ:

Ավելին՝ խաղի 72-րդ րոպեին ՀՖՖ Մրցավարական կոմիտեի անդամ Կամո Մահտեսյանը մարզադաշտում բացականչեց, որ Յան Էտեկիին պետք էր ցույց տալ կարմիր քարտ, ինչը եւ տեղի ունեցավ րոպեներ անց: Այս միջադեպով եւ կողմնակալության առերեւույթ փաստով «Նոա» ֆուտբոլային ակումբը պատրաստվում է դիմել Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա:

Հանդիպման մրցավարական կազմ՝ Արտեմ Գասպարյան, Արթուր Գդլյան, Արման Հակոբջանյան, Դավիթ Մկրտչյան, Աշոտ Ղալթախչյան, Հրանտ Համբարյան»,- ասված է ակումբի տարածած հաղորդագրության մեջ:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ

WhoScored-ը հրապարակել է Ռուսաստանի Պրեմիեր լիգայի 8-րդ տուրի լավագույն խաղացողների կազմը:

«Ակրոնն» ու «Կրասնոդարն» ունեն ամենամեծ ներկայացվածությունը՝ այս ակումբներից չորսական խաղացողներ կազմում են խորհրդանշական հավաքականը:

Ամենաբարձր գնահատականը ստացել է Հայաստանի ազգային հավաքականի եւ «Կրասնոդարի» կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը՝ 9,6:

Հիշեցնենք, որ ՌՊԼ-ի 8-րդ տուրում «Կրասնոդարը» սեփական հարկի տակ հաղթեց «Ռոստովին»՝ հաղթական դուբլ գրանցեց Էդուարդ Սպերցյանը:

ՄՕԿ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐ

Միջազգային օլիմպիական կոմիտեն (ՄՕԿ) հրապարակել է կազմակերպության նախագահի թեկնածուների ցուցակը:

ՄՕԿ-ի ղեկավարի պաշտոնի համար կպայքարեն 7 հոգի:

Ֆեյսալ իբն Հուսեյն (Հորդանան)
Սեբաստիան Կոու (Մեծ Բրիտանիա)
Քիրստի Քովենտրի (Զիմբաբվե)
Խուան Անտոնիո Սամարանչ կրտսեր (Իսպանիա)
Յոհան Էլիաս (Շվեդիա)
Դեյվիդ Լապարտիեն (Ֆրանսիա)
Մորինարի Վատանաբե (Ճապոնիա):

● *Սեպտեմբերի 24-ին՝ 19:30-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կբեմադրվի «Էն լոռու ձորն է» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

ՀԱՐՑ. Եթե լրացել է անձի՝ կենսաթոշակի անցնելու տարիքը, ապա դիմում ներկայացնելու համար նա ի՞նչ պետք է անի եւ ո՞ւր ներկայանա:

Լաուրա Խաչատրյան (65 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ եթե անձը ձեռք է բերել կենսաթոշակի անցնելու իրավունք, ապա առաջին հերթին պետք է նախապատրաստի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը եւ դիմի իր բնակության (հաշվառման) վայրի կենսաթոշակ նշանակող մարմին:

Այսպես, տարիքային կենսաթոշակ նշանակելու համար նա պետք է ներկայացնի՝

1) դիմումը,
2) անձը հաստատող փաստաթուղթը,
3) հանրային ծառայությունների համարանիշը,
4) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթը (աշխատանքային գրքույկը, անհրաժեշտության դեպքում՝ ստաժը հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ),
5) սոցիալական վճար կատարած լինելու մասին ծառայության տված տեղեկանքը (կամ այդ փաստը հավաստող վճարման հանձնարարագրեր, անդորրագրեր) կամ գործատուի (Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու եկեղեցականի դեպքում՝ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կաթողիկոսարանի) տված տեղեկանքն աշխատավարձի չափի մասին՝ ըստ տարիների եւ ամիսների,
6) լուսանկար (4 x 6 սմ չափի):

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում նա լրացնում է աշխատակցի տրամադրած դիմումի ձեւը, որից հետո նրան է վերադարձվում դիմումի ծանուցումը, որտեղ նշվում է դիմումի գրանցման համարը, ընդունման ամսաթիվը, ընդունող աշխատակցի ազգանունը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու ժամկետը:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՐՑ. Մշակութային արժեքների փորձագիտական գնահատման ի՞նչ կարգ է գործում Հայաստանի Հանրապետությունում:

Հայկ Ստեփանյան (33 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների եւ մշակութային նշանակության առարկաների արվեստաբանական ու մշակութաբանական փորձաքննությունն իրականացնում է «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Փորձաքննության շահառուներ են հանդիսանում ՀՀ եւ օտարերկրյա քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, այդ թվում՝ ՀՀ պետական մարմինները: Փորձաքննությունն իրականացվում է ներկայացված դիմումի կամ հանձնարարության հիման վրա: Ֆիզիկական անձանց դեպքում գործընթացի սկիզբ է համարվում վերջիններիս կողմից կենտրոնի հայտագրման բաժին դիմում ներկայացնելը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գրության հրամանի, հանձնարարության, որոշման եւ փորձաքննության ենթակա իրի կամ իրերի եւ դրանց լուսանկարների տրամադրումը: Փորձաքննության առավելագույն ժամկետ է համարվում 15 օրը՝ բացառությամբ կողմերի համաձայնությամբ որոշակի ժամկետով երկարաձգելու դեպքերի: Կենտրոնը փորձաքննությունն իրականացնում է 28 ոլորտներում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փորձաքննության արդյունքում հայտատուին տրամադրվում է համապատասխան փորձագիտական եզրակացություն: Փորձաքննության դիմաց հայտատուն կատարում է վճարներ՝ «Մշակութային արժեքների արվեստաբանական եւ մշակութաբանական փորձաքննության, ինչպես նաեւ իրականացվող այլ ծառայությունների վճարների գանձման մասին» կարգին համապատասխան:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարները՝ համացանցից

Երեկ Միացյալ Թագավորությունից Հայաստան են բերվել պտղաբերության, մայրության հայոց աստվածուհի, ոսկեմայր Անահիտի գլխաքանդակը եւ ձախ ձեռքը. սա մշակութային բացառիկ իրադարձություն է Հայաստանում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+8 + 11 +24 + 29
Կոտայքի լեռներ	+8 + 11 +25 + 29
Կոտայքի նախալեռներ	+16 + 18 +29 + 30
Գեղարքունիք	+9 + 11 +23 + 28
Լոռի	+9 + 14 +23 + 27
Տավուշ	+12+ 17 +27 + 30
Արագածոտնի լեռներ	+9 + 12 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+15+ 18 +27 + 31

Արարատ	+17 + 20 +33 + 35
Արմավիր	+15 + 18 +33 + 35
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 11 +25 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 20 +32 + 35
Սյունիքի հովիտներ	+17 + 21 +33 + 35
Սյունիքի նախալեռներ	+14 + 17 +29 + 32
ԼՂՀ	+13 + 16 +27 + 31
Երեւան	+24 + 26 +30 + 32

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.9.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*